Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածում կատարվող փոփոխության

(...)

Հոդված 83. Ներումը

Հանցագործության համար դատապարտված անձը ներման ակտով կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով կամ պատժաչափով~~, կամ կարող է վերացվել դատվածությունը~~:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածում կատարվող փոփոխության

(...)

Հոդված 373. Դատավճռի հրապարակումը

1. Դատավճիռն ստորագրելուց հետո դատարանը վերադառնում է դատական նիստի դահլիճ, և նախագահողը հրապարակում է դատավճիռը: Դատական նիստի դահլիճում բոլոր ներկա գտնվողները դատավճիռը լսում են հոտնկայս:

2. Եթե դատավճիռը շարադրված է այն լեզվով, որին ամբաստանյալը չի տիրապետում, ապա դատավճիռը հրապարակվելուց անմիջապես հետո թարգմանիչն այն պետք է թարգմանաբար կարդա այն լեզվով, որին ամբաստանյալը տիրապետում է:

3. Նախագահողն ամբաստանյալին, մյուս մասնակիցներին պարզաբանում է դատավճռի բողոքարկման կարգը և ժամկետը: Արդարացվածին պետք է բացատրվի ապօրինի ձերբակալման, որպես մեղադրյալ ներգրավելով, խափանման միջոցներ կիրառելով, ապօրինի դատի տալով պատճառված վնասի հատուցման նրա իրավունքը, ինչպես նաև տվյալ իրավունքի իրականացման կարգը:

4. Ամբաստանյալին բացատրվում է ներման խնդրագիր ներկայացնելու իրավունքը: